

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎԸ

Սույն թվականի հոկտեմբերի 17-ին Ավստրիայի Սենտ-Պյոլտեն քաղաքում տեղի ունեցավ Եվրոպայի երիտասարդ քրիստոնյաների էկումենիկ խորհրդի տարեկան հաշվետու ժողովը: Ժողովին մասնակցում էին 19 երկրներից ժամանած շուրջ 100 երիտասարդ քրիստոնյաներ, որոնցից ոմանք միաժամանակ անդամներ են միջազգային այլ քրիստոնեական կազմակերպությունների և երիտասարդական շարժումների, ինչպես օրինակ՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը, Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսը, Ուղղափառների երիտասարդական կազմակերպությունը, Քրիստոնյա ուսանողների համաշխարհային կազմակերպությունը, Մերձավոր Արևելքի քրիստոնյաների խորհուրդը, Երիտասարդ դեմոկրատների միջազգային խորհուրդը և այլն:

Սովետական Միությունում գործող քրիստոնեական տարբեր դավանության պատկանող Եկեղեցիներից ժողովին մասնակցում էին յոթ ներկայացուցիչներ:

Հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, սույն հաշվետու ժողովին իր մասնակցությունը բերեց նաև Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վարդապետ Կյուրեղյանը:

Ժողովը բաց արեց Տ. Յանգ արքեպիսկոպոսը, որը ժողովականներին փոխանցեց Վիեննայի Արքեպիսկոպոս կարդինալ Քյոնիգի ողջույնի և բարիգալստյան խոսքը: Բարիգալստյան և ողջույնի խոսք ասաց նաև Սենտ-Պյոլտենի եպիսկոպոս Ֆրանց Զակին:

Ապա հանդիսավորությամբ և ընդհանուր խանդավառության մթնոլորտում տեղի ունեցավ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու անդամակցությունը Եվրոպայի երիտասարդ քրիստոնյաների էկումենիկ խորհրդին:

Հոկտեմբերի 18-ին ժողովի մասնակիցները լսեցին Եվրոպայի քրիստոնյա երիտասարդների էկումենիկ խորհրդի գլխավոր քարտուղար Գիպելհեր-Հիկելի (ԳԴՀ), ինչպես նաև խորհրդի նախագահ Քրիստիան Հոլենդերի (Շվեդիա) զեկուցումները:

Այնուհետև ժողովը շարունակեց իր աշխատանքները աշխատանքային վեց խմբերում: Ժողովականների կողմից տարբեր նիստերի ընթացքում քննության առնվեցին լատինա-ամերիկյան քրիստոնեական երիտասարդական կազմակերպության գործունեությունը, ինչպես նաև Մերձավոր Արևելքի քրիստոնյաների խորհրդի գործունեությունը Լիբանանում տեղի ունեցած ծանր իրադարձությունների ժամանակ, աշխարհի զանազան երիտասարդական շարժումների և վերոհիշյալ խորհրդի միջև համագործակցու-

թյուն հաստատելու և այն ընդլայնելու հարցը և հարակից այլ հարցեր:

Երեք օրվա խմբակային աշխատանքներից հետո ժողովը իր վերջին լիագումար նիստում հրապարակեց կատարված աշխատանքներն ամփոփող մի փաստաթուղթ, որը որոշ փոփոխություններով և լրացումներով հաստատվեց ժողովականների կողմից:

Հոկտեմբերի 21-ի երեկոյան տեղի ունեցան ընդհանուր ընտրություններ: Նոր գլխավոր քարտուղար ընտրվեց Լաս Լոպան (Հունգարիա): Ընտրվեցին նաև նոր նախագահ, գործադիր կոմիտեի անդամները և գանձապահ:

Հոկտեմբերի 24-ին, կիրակի օրը, ժողովականները բաժանվեցին տեղական եկեղեցիների վրա՝ իրենց մասնակցությունը բերելու կիրակնօրյա հոգևոր արարողությանց: Այդ օրը Վիեննայի հայոց Ս. Հռիփսիմե եկեղեցում սուրբ պատարագ մատուցեց ժողովի աշխատանքներին մասնակցած Մայր Աթոռի միաբան Տ. Տիրան վարդապետ Կյուրեղյանը: